ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԽՄԲԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հայաստան, սուրբ երկիր և մեր հայրենիք, որտեղ գտնվում են մեր սրտերը...

Հայաստան...

Աշխարհի երեսին կա լեռներով կնճռապատ մի երկիր: Պատմության ընթացքում բազմիցս ասպատակող այրուձիների սմբակները, վայրագ ամբոխի արյունոտ կոտորածներն ու բնիկ ժողովրդի վիշտն ու կարիքն են կերտել այս երկրի ամեն մի կնճիռը:

Հայաստան...

Աշխարհի երեսին կա սրբական մի հողակտոր, որի վրա ապրող ժողովուրդը, հարանորոգ հոգով, երկնել է, ստեղծել ու կառուցել. աշխատել է ու քրտինք թափել, կռվել է, վոհվել ու պահպանել: Եվ այն, ինչ երկնել է, ստեղծել ու կառուցել, այն, ինչի վրա աշխատել է ու քրտինք թափել, այն, ինչի համար կռվել է, վոհվել ու պահպանել այս ժողովուրդը,—սուրբ է:

Հայաստան, սուրբ երկիր և մեր հայրենիք: Այս հողի համար է բաբախում աստղերի պես աշխարհով մեկ սփռված յուրաքանչյուր հայի սիրտը: Յուրաքանչյուր սփյուռքահայի աչքերի մեջ կարոտ կա՝ Հայաստանի կարոտ: Յուրաքանչյուր հայ, երբ Հայաստան է գալիս, ուխտի է գալիս որպես սրբական մի ուխտավայր:

Հայրենիքը ուժ է, հայրենիքը հպարտություն է ու բոցավառող կրակ այն հոգիների համար, ովքեր թուլանում են ու սկսում հանգել որպես հայ՝ օտարության մեջ:

Այս տարի էլ ուրախություն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար. Անգլիայի մայրաքաղաքից տասնմեկ պարման-պարմանուհիներ, առանձին խմբով, հյուր էին եկել մայր հայրենիք և Սուրբ Էջմիածին: Խումբը հայրենիք էր ժամանել մեծ ոգևորությամբ և արդեն ավանդական դարձած հատուկ ծրագրով. ոչ միայն տեսնել, ճանաչել հայրենիքը, այլև սովորել հայրենին. ոչ միայն կարոտալի սըր-

տով ըմբռնելով հայրենի բնության վայելքները, այլև սովորել հայեցի նիստուկաց, ըստանալ հայեցի ուսում (հայոց լեզու, հայ պար ու երգ) և այն տանել օտարության մեջ գտնվող իրենց ընկերներին, բարեկամներին, ազգականներին:

Խմբի ղեկավարն էր Մայր Աթոռի միաբան Տ. Հովնան աբդ. Տերտերյանը, որը նոր ավարտելով իր ուսումը Անգլիայի Օքսֆորդի համալսարանում, խմբի հետ վերադառնում էր Մայր Աթոռ:

Լոնդոնահայ երիտասարդների խումբը Հայաստան այցելեց սույն թվականի օգոստոսի 21-ին: Հայրենիքում գտնվելու առաջին օրն իսկ նրանց ընդունեց, բարի գալուստ մաղթեց և իր հայրական օրհնությունները բաշխեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետը:

Այնուհետև նրանք տեղավորվեցին Արագածի գեղատեսիլ լանջին գտնվող «Հայկաշեն» հայրապետական ամառանոցում, ատվածաշնչական Արարատի հայացքի տակ:

Շաբաթվա մեջ, առավոտից մինչև կեսօր, հատուկ ծրագրով, երիտասարդների համար անցկացվում էին հայ երգի ու պարի, հայոց լեզվի ուսուցումներ, որոնք կապմակերպել էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն: Իրենց ազատ ժամերին երիտասարդները հրճվանքով էին դիտում հայրենի երկրի նվաճումները: Նրանք եղան Երևանի տեսարժան վայրերում, հուզմունքով ողողեցին Ծիծեռնակաբերդի երկու միլիոն հայ նահատակաց հուշարձանի առաջ, Էրեբունիի ամրոցի ավերակների վրա վերհիշեցին ուրարտական պետության փառքը, եղան Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, և նրանց սիրտը հպարտությամբ լցվեց, այցելեցին Հայաստանի Պետական պատկերասրահ, Պատմության թանգարան, հիացան Երևանի մետրոպոլիտենով, ունկնդրեցին անլուգական «Անուշ» և «Այմաստ» օպերաները, ներկա եղան Հայաստանի երգ-պարի անսամբլի ելույթներին: Նրանց պատանեկան հոգին ագահությամբ կլանում էր հայրենի երկրի ամեն մի ուշագրավ երևույթ: Երևանում նրանք քայլում էին գլուխները բարձր պահած, տանտիրոջ նման, հպարտ, որ հայ են և հայրենիքում:

Երիտասարդները եղան Էջմիածնում և աղոթեցին լուսավորչահիմն Մայր տաճարում: Եղան Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ վանքերում, Հին և Նոր Վեհարաններում, Էջմիածնի նորակառույց «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատանը»: Մայր տաճարում մասնակցեցին սուրբ և անմահ պատարագին՝ հաղորդվելով սրբությամբ: Նրանք շրջապտույտներ կատարեցին դեպի Գառնի, Ս. Գեղարդի վանք, Սանահին և Հաղպատ, լսայլվեցին Սևանա լճով, այցելեցին Զվարթնոցի ավերակները, Օշական, Ամբերդ և Սարդարապատ:

Երիտասարդները հանդիպումներ ունեցան նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, արվեստի ու մշակույթի գործիչների, Մայր Աթոռի միաբանների, հոգևոր ճեմարանի ուսանողների և ալարվ հայ ժողովրդի հետ: Ամեն տեղ նրանց ջերմությամբ էին ընդունում, և նրանք իրենց լգում էին հարազատների մեջ:

Անգլիահայ երիտասարդները մայր հայրենիքում մնացին մինչև սեպտեմբերի 12-ը:

Մեկնումի նախընթաց օրը երիտասարդներին Վեհարանում կրկին ընդունեց Վեհափառ Հայրապետը՝ կիսելու համար նրանց տպավորությունները և պատգամներ տալու նրանց: Հայրապետը օրհնեց բոլորին՝ պատվիրելով հոգեպես միշտ կապված մնալ հայրենիքին, չկորցնել հայ լեզուն, հայ հավատքը և հայի նկարագիրը:

Երիտասարդները ուխտեցին մինչև մահ հավատարիմ մնալ մայր հայրենիքին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Այնուհետև երիտասարդները Հայոց Հայրապետի առջև հանդես եկան գեղարվեստական ամփոփ մի ծրագրով, որը բաղկացած էր Հայաստանում իրենց սովորած հայկական երգերից ու բանաստեղծություններից: Վերջում խմբի անունից շնորհակալական խոսք ասաց Ստեղա Մեյջրը.

«Վեհափառ Տեր, հանուն մեր խումբի բոլոր անդամների, Ձերդ Սրբության կիսյտնեմ անսահման շնորհակալություն ու երախտագիտություն, որ այս գեղեցիկ առիթը ստեղծեցիք՝ հրավիրելով մեզ մայր հայրենիք, Սուրբ Էջմիածին: Ամենքս անչափ ոգևորված ենք հայրենի աշխարհի գեղեցկությամբ:

Այցելեցինք Սարդարապատ, այն վայրը, ուր հայ մարտիկները թափեցին իրենց սուրբ արյունը՝ պահպանելու համար այսօրվան հայրենիքը: Անշուշտ, երբ կհիշենք Սարդարապատը, կարելի չէ մոռնալ Գարեգին Հովսեփյանին, որը խաչն ի ձեռին, կառաջնորդեր հայոց բանակները:

Հայաստան մեր այցելության առաջին օրն իսկ զգացինք Ծիծեռնակաբերդ, ուր բոլորս միասին, անշեջ կրակի շուրջ խմբված, երգեցինք «Հայր մեր...»:

Հպարտությամբ կրնանք ըսել, որ, հակառակ ամեն տեսակ չարչարանքների, մենք՝ հայերս, կարողացանք ոտքի կանգնել և այս փոքրիկ Հայաստանի տարածքին վրա կերտել հրաշալի հայրենիք մը:

Սիրեցինք մեր ժողովրդի հարազատ և ջերմ զգացումները: Առիթ եղավ, որ քանի

ումը անգամ Երիտասարդական պալատ երթանք, խոսինք երիտասարդներու հետ, տեղեկանանք իրենց կյանքի և ուսման մասին: Իրապես ուրախ ենք, որ այսօրվան Հայաստանի պայմանները հնարավորություններ կստեղծեն բոլոր հայ երիտասարդներուն ստանալու բարձրագույն կրթություն:

Հայաստան մեր այցելությունը անջնջելի պիտի մնա մեր հիշողության մեջ: Ասիկա գեղեցիկ պատեհություն մը եղավ ամենքիս համար՝ ճանչնալու մեր ազգը և մանավանդ՝ ճանչնալու մենք զմեզ:

Մեր սիրելի Վեհափառ Հայրապետ, կխոստանանք, որ մեր պարտքը պիտի ըլլա՝ ոչ միայն կրկին վերադառնալ հայրենիք և Ս. Էջմիածին, այլև կխոստանանք, որ պիտի քաջալերենք լոնդոնահայ մեր երիտասարդ բարեկամները, որ իրենք ևս այցելեն այս սուրբ երկիրը, ուր մեր ամենուս սիրտը կբաբախի:

Կուխտենք հավատարիմ զավակներ մնալ Ս. Էջմիածնին և այսուհետև գործոն մասնակցություն բերել Հայաստանյայց Եկեղեցիեն ներս:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, մաղթել Ձեզ երջանիկ օրեր և մատչիլ Ձեր Սուրբ Աջին՝ ստանալու համար Ձեր հայրական օրհնությունները»:

Հաջորդ օրը լոնդոնահայ երիտասարդները մեկնեցին Անգլիա՝ իրենց հոգիներում տանելով հայրենիքի անթեղված սերը և քաղցր հիշատակները:

ՀԱՅԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ